

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԱՅՐԵՆԻՔ ՎԵՐԱԴԱՐՁՈՂ ՀԱՅԵՐԸ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ԵՆ ՍՏԱԼԻՆՑԱՆ
ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅԱՍԻՐ

«Սովետական Հայաստան» թերքը իր հուլիսի 12-ի համարի «Հայրենիք վերադարձող հայերը շրջապատված են ստալինյան նոգատարությամբ» առաջնորդող նոդվածում գրում է.

Անցյալ տարվա վերջերին ՍՍՌՄ Կառավարությունը պատմական որոշում ընդունեց «Արտասահմանից Հայերին Սովետական Հայաստան վերադառնալու կապակցությամբ ձեռնարկվող միջոցառումների մասին»։ Այդ որոշումով Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին թուլատրվել էր կազմակերպել արտասահմանցան երկրներում ապրող այն հայերի վերադարձը Հայրենիք՝ Սովետական Հայաստան, որոնք ցանկություն ունեն, ինչպես նաև հանճնարարվել էր վերադարձողների համար անհատական բնակարանային շինարարությունը ապահովել պետական վարդում։

Այդ պատմական որոշումը այժմ իրադրժվում է։ Արդեն հայրենիք է վերադարձել օտարության մեջ գեգերող մեր Հայ եղբայրների և քույրերի առաջին խումբը՝ թվով 1806 մարդ։ Հայաստանի աշխատավորությունը գրկարաց ընդունեց վերադարձողներին։ Նրանք բոլորն էլ տեղավորվեցին նախապես առանձնացված բնակարաններում, տեղափորկեցին աշխատանքի ըստ մասնագիտության։ Մոտ օրերս սպասվում է երկրորդ խմբի վերադարձը։ Մինչև այս տարվա վերջը Հայրենիք կվերադառնան մի քանի տասնյակ հազար հայեր։

ՍՍՌՄ Մինիստրների Սովետը ս. թ. հունիսի 21-ին որոշում ընդունեց Հայկական ՍՍՌ-ում արտասահմանյան հայերի ընդունումը և տեղավորումը նախապատրաստելու միջոցառումների մասին։ Այդ որոշումը արտասահմանից Հայրենիք վերադարձող հայերի նկատմամբ բոլշեվիների պարտիայի, Սովետական կառավարության և անձամբ ընկերության մեջ գործում է։

Թյան փայլուն արտահայտությունն է։ Այդ որոշման համաձայն արտասահմանից վերադրձող հայերին տեղավորելու նպատակով հակայական բնակարանային շինարարությունն է ծավալվել մեր ոեսպուլիկայում։ Միայն 1946 թվին այդ նպատակով պետք է կառուցվի մոտ 135 հազար քառակուսի մետր բնակելի տարածություն, ըստ որում տեղական սովետների գծով 8. 1 հազար քառակուսի մետր, քաղաքներում և քաղաքայի վայրերում 64 հազար քառակուսի, գյուղական վայրերում՝ 40 հազար քառ. մետր և այլն, թացի այդ, որոշումը պարտավորեցնում է գոյություն ունեցող բնակարանային ֆոնդից առանձնացնել և վերանորոգել Յ հազար քառ. մետր տարածություն։ Պետք է կառուցվել երեք ավան, ամեն մեկը 200 տնտեսության համար։

Բացի այս միջոցառումներից, ՍՍՌՄ Մինիստրների Սովետը բոլոր անհամարժաշահ պայմանները ստեղծել է վերադարձողների անհատական բնակարանային շինարարության համար։ Բաց է թողնված 40 միլիոն ոռություն վարկ՝ 34 միլիոնը Գյուղանկի գծով, իսկ 6-ը Կոմունալ։ Հայրենիք վերադարձ ամեն մեկը, ով կցանկանա իր համար բնակարան կառուցել, կարող է քաղաքում ստանալ 30, իսկ գյուղական վայրերում 25 հազար ոռություն վարկ, 15 տարվա ժամանակով։ ՍՍՌՄ Մինիստրների Սովետը անհրաժեշտ միջոցառումներ է նշել նաև ծավալվող բնակարանային շինարարությունը շինանյութերով ապահովելու համար։

Ի կատարումն ՍՍՌՄ Մինիստրների Սովետի որոշման, մեր ոեսպուլիկայում հասկայական աշխատանք է ծավալվել։ Գոյու-

թյուն ունեցող բնակարանային ֆոնդից երեք հազար քառակուսի մետր բնակելի տարածովյուն առանձնացնելու փոխարեն, այժմ արդեն առանձնացված և վերանորոգված է 4 հազար քառակուսի մետր: Նախատեսված մոտ 135 հազար քառ. մետր նոր շինարարությունից ընթացքի մեջ է և շուտով կավարտիքի 50 տոկոսից ավելին: Լայն աշխատանք է տարվում և սահմանված ժամկետներում կատարվի բնակարանային շինարարության ամբողջ պլանը:

Մեր թերթի այսօրվա համարում հրապարակվում է ՍՍՌ-Մ Մինիստրների Սովետի 1946 թվի հունիսի 21-ի որոշումը իրագործելու նպատակով Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի և ՀԿ(բ)Պ Կենտկոմի ընդունած որոշումը: Այդ որոշման մեջ նշված են այն բոլոր անհրաժեշտ միջոցառումները, որոնց անշեղ կենսագործումը հնարավորություն կտա օրինակելիորեն ընդունել և տեղավորել արտասահմանից այս տարի հայրե-

նիք վերադարձող հայերի բոլոր խմբերին. Այդ որոշումը միաժամանակ մեծ պարտականություն է զնում մեր պարտիական, սովորական և տնտեսական օրգանների վրա: Նրանք պարտավոր են անշեղորեն իրագործել մեր պարտիայի և կառավարության նըշած միջոցառումները:

Արտասահմանից վերադարձող հայերի նըշած կատամարտ ընկեր Ստալինի ցուցաներած հայրական հոգատարությունը երախտագիտության բուն զգացումներով է լցնում այն մի ազնիվ հայի սիրտը դեպի մեր դարաշրջանի այն մեծ մարդը, որին հայ ժողովուրդը պարտական է իր Փիզիկական գոյությամբ, իր վերածնված ազատ ու երշանիկ հայունիքով, իր պետականությամբ:

Այդ հոգատարությունը մեզ պարտավորեցնում է նոր եռանդով ու թափով լծվել ստալինյան նոր հնգամյա հոյակապ պլանի կատարման աշխատանքներին ի փառս մեր հզոր սովետական հայրենիքի:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-ՈՒՄ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՑԱՆ ՀԱՅԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ՏԵՂԱՎՈՐՈՒՄԸ ՆԱԽԱՐԱՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՍՌ-Մ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԿԵՆՍԱԳՈՐԾԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

(Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի և Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմի 1946 թ. հունիսի 9-ի որոշումը)

«Հայկական ՍՍՌ-ում արտասահմանյան հայերի ընդունումը և տեղավորումը նախապատրաստելու միջոցառումների մասին» ՍՍՌ-Մ Մինիստրների Սովետի 1946 թվի հունիսի 21-ի որոշումը կենսագործելու նպատակով Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետը և ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեն որոշում էն.

1. Մինիստրությունների, գերատեսչությունների և կազմակերպությունների գծով 1946 թվի համար սահմանել արտասահմանյան հայերին ընդունելու և տեղավորելու նպատակով բնակարանային շինարարության հետևյալ պլանը (հազար քառակուսի մետրերով):

| | Քանակը | Ավարտման ժամկետը |
|---|--------|------------------|
| 1. Սթեղարդյունորերության Մինիստրություն | | |
| Հայկական ՍՍՌ սովորողական սովորականում | 3,65 | Օգոստոս |
| Միութենական ենթակայության սովորականում | 0,35 | Հուլիս |
| 2. Տեխնիկական արդյունաբերության մինիստրության | | |
| Լենինականի տեքստիլ կոմիտենատում | 0,6 | Օգոստոս |
| Երևանի Մահուղի գործարանում | 0,6 | Նոյեմբեր |
| 3. Թերթական արդյունաբերության մինիստրության | 0,5 | Սեպտեմբեր |
| 4. Տեղական արդյունաբերության մինիստրության | 3,0 | |
| 5. Ավտոդողերի գործարան | 0,4 | Օգոստոս |
| 6. Երևանի կարելի գործարան | 1,5 | Դեկտեմբեր |

| | | |
|---|-----|-------------|
| 7. Գյումուշզեսի շինարարություն | 2,8 | Հոկտեմբեր |
| 8. Լճային զեսի շինարարություն | 1,8 | Սեպտեմբեր |
| 9. Քաջարանշին | 1,0 | Օգոստոս |
| 10. Ալանվերդու հանքվարչություն | 0,4 | Օգոստոս |
| 11. Զանգեղուրի հանքվարչություն | 0,3 | Հուլիս |
| 12. Քանաքեռի Սլյումինշին | 2,5 | Օգոստոս |
| 13. Հայպղինձտրեստ (Երևանում) | 1,0 | Նոյեմբեր |
| 14. Կիրովականի Քիմիական գործարան և Աղոտի պարարտանյութերի գործարանի շինարարություն | 4,5 | Նոյեմբեր |
| 15. Ալանվերդու Քիմիական գործարան | 1,0 | Նոյեմբեր |
| 16. Երևանի Պոլիվինիլացետատի գործարան | 1,0 | Նոյեմբեր |
| 17. Ավտոտրակտորոգետալի գործարան | 1,0 | Նոյեմբեր |
| 18. Ժամացույցի գործարան | 1,0 | Դեկտեմբեր |
| 19. Կ. մալրեսորի գործարան | 1,0 | Դեկտեմբեր |
| 20. Փոքր հիգրոսուրբինների գործարան | 1,0 | Դեկտեմբեր |
| 21. Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Շինարեստ | 3,0 | |
| Ընդամենը | | 33,9 |

2. Բնակելի տների շինարարությունը ավտոմոբիլային արդյունաբերության, ուստինի արդյունաբերության, քիմիական արդյունաբերության, էլեկտրարդյունաբերության և ավիացիոն արդյունաբերության մինիստրությունների ձեռնարկություններում զնել Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Շինարարական տրեստի վրա. մեքենաշինության և գործիքայինության մինիստրության ձեռնարկություններում՝ ՈխՎՍՌ—338-ի վրա

ի հաշիվ 1946 թվի տարեկան պլանի:

3. Առաջարկել Երևանի, Լենինականի, Կիրովականի քաղաքային սովետների գործկումներին և Ալանվերդու, Ղափանի, Էջմիածնի, Արտաշատի, Աշտարակի, Ստեփանավանի ու Հոկտեմբերյանի քաղաքային գործկումներին ժամանող արտասահմանյան հայերին տեղավորելու համար 1946 թվին կառուցել և շահագործման հանձնել բնակելի տներ հետևյալ ժավալով՝

Գաղտներ և շրջանային կենտրոններ

Տարածությունը քառ. մետրերով

3.000

1.500

1946 թվին ընդեանուր բնակելի կառուցված տարած. քառ. տների քառ. մետրերով
նաևը

100

3.000

50

1.500

1. Երևանի քաղաքային 2. Լենինականի քաղաքային 3. Տեղական Արդյունաբերության մինիստրություն-շրջարդի կողմանը 4. Արհեստագործական կոոպերացիայի վարչություն 5. Այլ կառուցվածներ

Ընդամենը

933

11.300

5. Տեղական արդյունաբերության մինիստրությանը և Արհեստագործական կոռուպերացիայի վարչությանը՝ երկու օրվա ընթացքում կառուցվող տները բաշխել շրջարդկոմիքնատների և արհեստագործական արտելների միջն և պլանը հասցնել շրջաններին:

6. Պարտավորեցնել Վերաբնակեցման վարչության Ծինտրեստին արագացնել կուխողային տիպի երեք նոր ավանների կառուցումը՝ յուրաքանչյուր ավանում 200 տուն Ստորին Զանգվի շրանցքով ոռոգվող հողերում և Վեդու շրջանի հողերում, այդ ավանները շահագործման հանձնելով ընթացիկ տարում:

7. Պարտավորեցնել շրջանային սովետների գործկոմներին արտասահմանյան հայերին ընդունելու համար կոլխոզներում 1946 թվին կառուցել 1000 անհատական բնակելի տուն, 40 հազար քառակուսի մետր ընդհանուր բնակելի տարածությամբ, այդ տարածությունը բաշխելով ըստ շրջանների հետևյալ ձևով՝

| | |
|-------------------|-----|
| 1. Աղինի | 20 |
| 2. Ալավերդու | 30 |
| 3. Արտաշատի | 120 |
| 4. Արթիկի | 25 |
| 5. Ախտայի | 25 |
| 6. Ախուրյանի | 50 |
| 7. Աշտարակի | 40 |
| 8. Բասարգեշարի | 30 |
| 9. Բերիայի | 40 |
| 10. Վեդու | 50 |
| 11. Գորիսի | 20 |
| 12. Դիլշանի | 20 |
| 13. Ջանդիբասարի | 60 |
| 14. Կալինինոյի | 20 |
| 15. Ղափանի | 20 |
| 16. Կիրովականի | 25 |
| 17. Կոտայքի | 30 |
| 18. Կրասնոսելչևի | 25 |
| 19. Միկոյանի | 20 |
| 20. Նոյեմբերյանի | 15 |
| 21. Նոր Բայազետի | 50 |
| 22. Հոկտեմբերյանի | 50 |
| 23. Սիսիանի | 40 |
| 24. Սպիտակի | 10 |
| 25. Ստեփանավանի | 40 |
| 26. Թալինի | 35 |
| 27. Շամշադինի | 20 |
| 28. Էջմիածնի | 70 |

8. Առաջարկել Երևանի քաղսովետի գործկոմին և Ներքին գործերի մինիստրության Խճուղային վարչությանը 1946 թվի ընթացքում կառուցել և շահագործման հանձնել Երևան-Արարակի տրամվայի գիծը:

9. Առաջարկել Հայկական ՍՍՌ Մինիստրության Սովումբին կից Պետպանին և Արտաստանայան Հայերին ընդունող և տեղավորող կոմիտեին երկու շաբթվա ընթացքում ներկայացնել Հայկական ՍՍՌ Մինիստրության Սովետին և ՀԿ(Բ)Պ Կենտկոմին արտասահմանյան հայերին ընդունելու և տեղավորելու համար կառուցվող բնակելի տների շահագործման հանձնելու գրաֆիկը:

ԵԽԱՆՅՑՈՒԹԵՐԻ ԳԾՈՎ

10. Բնակարանային շինարարությունը շինանյութերով ապահովելու նպատակով 1947 թվին 250 հազար խորանարդ մետր Արթիկի տուփ, 350 հազար խորանարդ մետր պեղմա արդյունահանելու, տարեկան 100 հազար տոննա կիր և 6 միլիոն հատ կղմինդր արտադրելու մասին ՍՍՌՄ Մինիստրության Սովետի 1946 թվի հունիսի 21-ի որոշման համաձայն առաջարկել Հայկական ՍՍՌ Մինիստրությունը Սովետին կից ԵԽԱՆՅՑՈՒԹԵՐԻ արդյունաբերության գլխավոր վարչությանը, վարչության ձեռնարկություններում 1946-1947 թվերին անցկացնել հետևյալ միջոցառումները.

ա) Արթիկ-տուփի գծով.— 1946 թվի վերջում շահագործման հանձնել Մազրայի և Արմտլուփ հանքամասերը, որի համար արագացնել լեռնահանքային նախապատրաստական աշխատանքները, մինչև 1946 թվի նոյեմբերի մեկը ավարտել ղեպի Մազրայի հանքամասը տանող նեղդիծ երկաթուղու կառուցումը և մինչև 1946 թվի դեկտեմբերի մեկը կառուցել երկաթուղագծի փակուղի ղեպի Արմտլուփ հանքամասը:

նույն ժամկետում Մազրայի և Արմտլուփ տեղամասերում կառուցել էլեկտրական լարումը իշեղող ենթակայանները:

Աշխատանք կատարել ապահովելու 1947 թվին Արթիկի հանքերի Ղվշաղի հանքամասը շահագործման հանձնելու համար:

Մեկ ամսվա ժամկետում կարգի բերել Արթիկութի հանքամասերի ներսում եղած ուղիները և վագոններները և ապահովել հանքամասերից ղեպի երկաթուղային պլատֆորմները տուփի անխափան երկներթ փոխադրումը:

բ) Պեղմայի հանֆերի գծով.— Մինչև դեկտեմբերի մեկը վերանորոգել Անիպեղմա լայնագիծ երկաթուղին 6 կիլոմետր տարածությամբ, արագացնել կենինական-Անիպեղմա էլեկտրաշաղորդման գծի շինարարությունը՝ այն հաշվով, որպեսզի աշխատանք-

ներն ավարտվեն 1947 թվի առաջին եռամսյակում, ինչպես նաև մեքենայացնել բեռնման և բեռնաթափման աշախատանքները։ Մեկ ամսվա ընթացքում վերանորոգել է բըսկավատորք և ապահովել պեմզայի մեխանիկական բեռնումը։

Ընթացիկ տարում ապահովել Պեմզաշինի հանքամասերի վերանորոգումը և շահագործման հանձնելը։

գ) Կրի-փոցցողաճյան ցեմենտի Անի գործարանի գծով՝ 1946 թվին սկսել գործարանի երկրորդ հերթի սարքավորման մոնտաժի՝ այն հաշվով, որպեսզի մոնտաժն ավարտվի 1947 թվի առաջին կիսամյակում և գործարանի կարողությունը հասցնել տարեկան մինչև 60 հազար տոննայի։ Արարատի գործարանի կրի հնոցները փոխադրել հեղուկ վառելիքից կարծր վառելիքի։

դ) Կրի գծով-սկսել կրի նոր հնոցների կառուցումը գոյություն ունեցող գործարաններում և 1947 թվի առաջին կիսամյակում Զաշտուի գործարանի կարողությունը հասցնել 40 հազար տոննայի, և Արարատի գործարանին՝ 60 հազար տոննայի։ Արարատի գործարանի կրի հնոցները փոխադրել հեղուկ վառելիքից կարծր վառելիքի։

ե) Կղմինդրի արտադրության գծով-ապահովել 1946 թվի երկրորդ կիսամյակում երեսնի գործարանի լիակատար կարողությունը 2 միլիոն 500 հազար հատ կղմինդր արտադրելու համար։ Ավելացնել Կիրովականի գործարանի կարողությունը, նրա արտադրողականությունը հասցնելով 2 միլիոն 200 հազար կղմինդրի։

Ապահովել տեխնիկական ղեկավարությամբ երեսնի կղմինդրի գործարանը, վերացնել տեխնոլոգիայում եղած թերությունները և ապահովել գործարանի նորմալ աշխատանքը։

11. Պարտավորեցնել Տեղական արդյունաբերության մինիստրությանը և քաղաքային ու շրջանային սովետների գործկոմներին։

ա) 1946 թվին ապահովել պլանով նախատեսված 50 հազար խորանարդ մետր շինաքարի հանույթը և 1 միլիոն 300 հազար հատ աղյուսի, 1 միլիոն 200 հազար հատ կղմինդրի, 7 հազար տոննա կրի և 20 հազար տոննա ալեքսատրի ու գաշի արտադրությունը։

բ) Ռեսպուբլիկայի բոլոր շրջաններում վերականգնել նախապատերազմյան կարողությունները, շրջարդկոմբինատներին կից կազմակերպել շինանյութերի արտադրության նոր ձեռնարկություններ և մինչև 1947 թվի հունվարի 1-ը հասցնել աղյուսի տարեկան արտադրությունը 1 միլիոն 800 հա-

զար հատի, կղմինդրինը՝ 2 միլիոն 500 հազար հատի, կրինը՝ 10 հազար տոննայի։ Ենիաքարի հանույթը 1947 թվին հասցնել 80 հազար խորանարդ մետրի։

գ) 1947 թվին ապահովել գաշի և ալերաստրի արտադրությունը 26 հազար տոննայի շափով, որից երեսնի Դաշի գործարանում 24 հազար տոննա և ուսպութիկայի շրջաններում (Կիրովական, Նոյեմբերյան և այլ շրջաններ) 2 հազար տոննա։

12. Պարտավորեցնել Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Արհեստագործական կոռպերացիայի վարչությանը։

ա) 1946 թվին ապահովել պլանով սահմանված 50 հազար խորանարդ մետր շինաքարի հանույթը և 1 միլիոն 500 հազար հատ կղմինդրի, 1 միլիոն 500 հազար հատ աղյուսի ու 1.000 տոննա կրի արտադրությունը։

բ) արագացնել, 1947 թվի առաջին եռամսյակում շահագործման հանձնելով էջմիածնի, Ալավերդու, Աշտարակի և Ճոկտեմբերյանի աղյուսի-կղմինդրի գործարանների շինարարությունը և ընդլայնել կղմինդրի ու աղյուսի արտադրությունը հջանում և Արտաշատում, ապահովելով 1947 թվին մինչև 1 միլիոն 800 հազար հատ աղյուսի և մինչև 2 միլիոն հատ կղմինդրի արտադրությունը։

Կրի արտադրությունը 1947 թվին հասցնել 2 հազար տոննայի, որի համար 1946 թվին ավարտել երեք կրի հնոցի կառուցումը Սպիտակում և կառուցել նոր կրի հնոցներ ուսպութիկայի այլ շրջաններում։

Ենիաքարի հանույթը 1947 թվին հասցնել 100 հազար խորանարդ մետրի։

13. Պարտավորեցնել Հողագործության Մինիստրությանը, մեկ ամսվա ընթացքում մշակել և ներկայացնել Մինիստրների Սովետին քննության 1946—47 թվերին տեղական շինանյութեր արտադրող կոլխոզային ձեռնարկությունների վերականգնման ու կառուցման միջոցառումները՝ այն հաշվով, որպեսզի լիովին ապահովվի շինաքարի, կրի, կղմինդրի, աղյուսի և այլ նյութերի սեփական պահանջը։

14. Հանձնարարել Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետպանին, 10 օրվա ընթացքում ներկայացնել 1946 թվին նախատեսված բնակարանային շինարարությունը շինանյութերով ապահովելու պահանջը և աղբյուրները։

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳԾՈՎ

15. Պարտավորեցնել Գյուղատնտեսական և Կոմունալ բանկերին, վարկեր տրամադրել

հայրենիք վերադարձող արտասահմանյան հայերի համար անհատական բնակելի տներ կառուցելու նպատակով գյուղական վայրերում մինչև 25 հազար ոռոգի և քաղաքներում մինչև 30 հազար ոռոգի մեկ տան համար, այդ վարկերը 15 տարում մարելու պայմանով՝ սկսած վարկ տրամադրելուց հետո երկրորդ տարուց, Անհատական բնակելի տների կառուցման համար վարկեր տրամադրել կազմակերպություններին, Վերաբնակեցման վարչության միջոցով՝ դրանք այնուհետև ձևակերպելով վերաբնակիչների վրա պավարության նրանց հանձնելու ժամանակից:

16. Պարտավորեցնել Հայկական ՍՍՌ Ֆի-

ԿԱՌՈՒՑՎՈՒՄ Է

ԱՐԹԻԿ.— Երջանի հակնդեղացան կողմուները հովիսի 3-ից սկսեցին զարանդու գետի ձախափնյա շրանցքի կառուցման աշխատանքները: Նոր շրանցքը, որի ջուրը վերցվելու է Զարանդու գետից, ձգվում է

նանսների Մինիստրությանը, տեղական սովորությունը գործկումներին ապահովել ՍՍՌՄ Մինիստրությունը Սովետի 1946 թվի հունիսի 21-ի որոշման վենսագործումը Հայկական ՍՍՌ ժամանելուց հետո գյուղական վայրերում տեղակրոված վերաբնակիչ հայերին գյուղատնտեսական հարկ և ամուրի, միայնակ ու սակավ ընտանիք քաղաքացիների վրա դրվող հարկը վճարելուց երկու տարի ժամանակով՝ ազատելու մասին, ինչպես նաև իրենց կազմի մեջ վերաբնակիչ հայեր ընդունած կոլխոզները ընդունված տնտեսությունների թվի համաձայն եկամտահարկի վճարումից երկու տարով ազատելու մասին:

ՆՈՐ ԶՐԱՆՑՔ

Ալագյազի հարավային լանջերով և ոռոգելու է լեռնալանջերի և հարթավայրի հակնդեղի պլանտացիաները: Զրանցքի երկարությունն է 35 կիլոմետր:

ԵՐԵՎԱՆԻ ԿԱԲԵԼԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Երևանում կառուցվում է կարելի գործարան: Դա ստալինյան շղթարորդ հնդամյակի այն նորակառուցյաներից է, որը բազմապիսի էլեկտրական լարեր է արտադրելու ոչ միայն մեր, այլ և եղբայրական ուսապուրիկաների էլեկտրաարդյունաբերության և էլեկտրատուրնակառության համար: Այդ գործարանի կարողությունը մասին գաղափար կազմելու համար բավական է ասել, որ նա հնդամյակի վերջում տարեկան սալու է 57 միլիոն ոռոգու արտադրանք: Արտադրվելու են ստորերկրյա կարեներ, բարձր զարման արտաքին գծերի, շենքերի լուսավորության և ամեն շափսի ու տեսակի էլեկտրական լարեր:

Լավ գիտակցելով իրենց վրա դրված խնդրի լրջությունը, կառուցողները, մոնտաժավորները, ինժեներատեխնիկական անձնակազմը եռանդով ձեռնամուխ են եղել շենքարության աշխատանքներին: Անձնութաց աշխատանքով նրանք արդեն գործարկել են

մի շաբթ ցեխերը և ծավալել էլեկտրահաղորդման արտաքին սև լարերի, զենքերի լուսավորության և փաթաթվածքային մեկուսացած զարերի արտադրությունը Այսպես, այս տարվա անցած ամիսների ընթացքում գործարանը թողարկել է 190 կիլոմետր լուսավորության և 15 տոննա փաթաթվածքի պղնձալար: Աշխատանքները տարվում են այն հաշվով, որ այս տարի գործարանը տա իր առաջին երկու միլիոն ոռոգու արտադրանքը:

Կառուցված ցեխերը սարքավորելու, մեքենաները տեղադրելու և գործարկելու հետ միասին, առաջ է տարվում նաև շինարարությունը: Ապագա խոշոր գործարանի նոր ցեխերի և օժանդակ ձեռնարկությունների կառուցմանը զուգընթաց, այս տարի շահագործման է հանձնվելու 2500 քառակուսի մետր բնակելի տարածություն,

ԲԱՏՐՈՆԻ ՆՈՐ ՇԵՆՔ

Ստալինյան 4-րդ հնդամյա պլանով նախատեսված է Երևան քաղաքում կառուցել 9. Սովորված անվան Պետական դրամատիկական թատրոնի նոր շենք: Ենթադր կառուցվելու է Ստալինյան պղղոտայի վրա, Մարքսի փողոցի դիմաց, տնենալու է 60-70 հազար խորանարդ մետր ընդհանուր ծավալ և տե-

ղավորելու է 1200 մարդ: Նոր կառուցվելիք շենքը բոլոր կողմերից երեսպատվելու է մաքոր տաշված երևանի բազալտ քարով: Ենթադր նախագծի վրա ներկայում աշխատում են ՍՍՌՄ ճարտարապետական Ակադեմիայի իսկական անդամ Կ. Հալաբյանը և նույն ակադեմիայի անդամ-թղթակից պրոֆ-

Ս. Սաֆարյանը: Նախագծի հեղինակները սպագործում են հայկական ճարտարապետական լավագույն նմուշները: Նրանք էքսի-

զային նախագիծը ավարտելու են այս տար-
վա հոկտեմբերին:

ՄԵԿ ՄԻԼԻՈՆ ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ

Այս տարի համարյա կրկնապատիկ ավել-
լանում է դասագրերի հրատարակումը՝ հա-
յերեն և ռուսերեն զեզումներով՝ Հայկական
ՍՍՌ տարրական և միջնակարգ դպրոցների
համար:

Հայպետհրատը լուսու է ընծայում քառա-
տուն դասագիրք մեկ միլիոն 210 հազար
օրինակ տիրաժով: Դրանցից 34 դասագիրք՝
մեկ միլիոն 71 հազար օրինակ տիրաժով
հրատարակվում է հայերեն լեզվով, իսկ 6
դասագիրք՝ 139 հազար օրինակ տիրաժով,
ռուսերեն լեզվով:

ՏԱՅԸ ՀԱԶԱՐ ԴԱՍԱԳԻՐՔ

Հրատարակվող գրքերի թվում կան դասա-
գրեր, որոնք վերջին 5—6 տարում լուս-
շեն տեսել:

Այս տարի առաջին անգամ հրատարակ-
վում է տեղում կազմված անգլերեն լեզվի
դասագիրք: Տպագրության են պատրաստ-
վում ֆրանսերենի և գերմաներենի դասա-
գրեր:

Դասագրերը տպվում են լավ թղթի վրա,
զգալիորեն բարելավվում է նրանց հրատա-
րակության որակը:

ՆՈՐ ՀԱՅՏԱԳՈՐԾՈՒՄՆԵՐ ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐՈՒՄ

Հոմիսի վերջերին Երևանի մոտ, Կարմիր
բլուրում վերսկսվեցին մեր թվարկությունից
առաջ 7-րդ դարի Ուրարտական բերդի պե-
ղումները:

Ինչպես հայտնի է, այդ բերդի նախորդ
պեղումները զգալիորեն լրացրին մեր գի-
տելիքները ՍՍՌՄ տերիտորիայում հնա-
գույն պետության, Ուրարտուի թագավորու-
թյան կուսակայի մասին: Կարմիր բլուրի
նախորդ ուսումնասիրությունների տվյալնե-
րը ամփոփված են պրոֆեսոր Բ. Պիոտ-
րովսկու «Ուրարտուի պատմությունը» և կու-
տուրանա աշխատության մեջ, որի համար
հեղինակն արժանացել է Ստալինյան մրցա-
նակի:

1946 թվին Կարմիր բլուրում աշխատանքը
կատարում է Հայկական ՍՍՌ Գիտություն-
ների Ակադեմիայի Պատմության ինստիտու-
տի և Պետական Էրմիտաժի հնագիտական
միացյալ արշավախումբը, Արշավախումբը
զեկավարում է Հայկական ՍՍՌ Գիտություն-
ների Ակադեմիայի թղթակից-անդամ, Ստա-
լինյան մրցանակի լաւուեատ պրոֆեսոր Բ.
Պիոտրովսկին, որը մեր թղթակցի հետ ունե-
ցած զրոյցի ժամանակ հաղորդեց հետևյա-
լու:

— Շարունակելով անցյալ տարիների աշ-
խատանքը, զգալի տերիտորիայում պեղում
են պալատի առջև դասավորված բնակարան-
ները, որոնք տալիս են բերդի բնակիչների
կյանքի լիակատար պատկերը: Ինչպես
հայտնի է, Ուրարտուի բերդի անկումը տեղի
է ունեցել հանկարծակի, մեր թվարկություն-
ից առաջ 6-րդ դարի սկզբում, սկզբութա-

կան ցեղերի արշավանքի ժամանակ: Թերդի
պարիսպների մոտ գտնվող բնակարանները
հրկիզել են սկզբութացիները: Այրված կտու-
ները փուլ են եկել և իրենց տակ թաղել
բնակարաններում գտնվող ամեն ինչ, այն
ձևով, որն ունեին նրանք թշնամիների հար-
ձակման պահին:

Թերդի անկումը տեղի է ունեցել ամառը՝
հուկիսի վերջերին կամ օգոստոսի սկզբնե-
րին, երբ բերքը հավաքված է եղել: Հիա-
նալի պահպանվել են հացահատիկի հըս-
կայական պաշարները, որոնք թաղ-
ված են եղել թի հատուկ հացահատիկա-
յին հորերում և թի օշախների մոտ դրված
անոթներում:

2600 տարի հնություն ունեցող այդ հա-
տիկների մեջ կան ցորենի, գարու, կորեկի,
քունջութի, ոսպի և այլ կուստուրանների ըն-
տիր տեսակի հատիկներ, որոնք վկայում են
հողագործական բարձր կուստուրան Ուրար-
տուում: Գտնված գործիքների և զենքերի մեջ
գերակշռում են երկաթի առարկաները, այն
է՝ թրեր, նետի ու տեղի ծայրեր և մանգաղ-
ներ:

Առանձնապես հետաքրքիր արդյունքներ
տվին հրդեհի ժամանակ այրված պալատի
ներին շենքերի պեղումները: Մեծ շենքերից
մեկում դեռ նախորդ աշխատանքների ժա-
մանակ հայտնաբերվել էր գեկորատիվ նը-
շանակություն ունեցող բրոնզե մեծ վահան,
որի վրա վերջերս կարդացվեց ուրարտական
սեպագիր մի մակագություն: Մակագու-
թյունն ասում է, որ այդ վահանը Խալդ աս-
տղծուն նվիրել է Ուրարտուի թագավոր Մե-

Նուի որդի Արգիշտին, որը կառավարել է
մեր թվարկությունից առաջ 7-րդ դարում:

Այս տարի կատարված աշխատանքի մի քանի օրվա ընթացքում մյուս շենքերում գտնվեցին նոր հետաքրքիր առարկաներ՝ ուկերական նորոք աշխատանքով պատրաստված ուկեր օղեր, քարե հովունքներ, և շափազանց հազվագյուտ գլանաձև կնիքներ դիցաբանական տեսարաններով, որոնք ամենաարժեքավոր նյութն են տալիս Ուրարտուի կրոնն ուսումնասիրելու համար։ Հովունքների մեջ հայտնաբերվել են նաև հին եփիպտական մի աստվածուհու ճենապակյա փոքր արձան, ինչպես նաև եփիպտական հովունքներ, որոնք վկայում են հեռավոր ժամանակ։ Ների առևտրական կապերի մասին:

Ծենքերից մեկում, շտեմարանի տակ,
գտնվել է բրոնզե իրերի մի մեծ կույտ՝ թա-
սեր, կանթեղներ, գտտիներ, կահուպէի մա-
սեր, մետաղի կտորներ՝ որոց կշիռը ունեցող

ԱՍԱԼԻՆՅԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ

1945 թվի գիտական նշանավոր աշխատությունների, գյուտարարությունների, արտադրական աշխատանքի մեթոդների արմատական կատարելագործումների և արվեստի ու գրականության ասպարեզում լավագույն երկերի համար ՍՍՌ Միության Մինիստրների Սովետի որոշմամբ Ստալինյան մրցանակներ են շնորհված մեր երկրի գիտնականներին, արտադրության նովատորներին, կոլխոզնիկներին, գրողներին ու արվեստագետներին:

Ստալինյան մրցանակի արժանացածների
թվում են գտնվում նաև Հայ ժողովրդի զա-
վակները:

Նշանավոր գյուտարարությունների և արտադրական աշխատանքի մեթոդների արմատական կատարելագործումների համար

Երկրորդ աստիճանի լրցանակներ են
շնորհված՝ 100 հազար ռուբլու չափով:
ԱՐՄՍԹՈՒՆԻ ՄԱՐՏԻՐՈՍԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ՝
№ 742 գործարանի ինժեներ.—աղաթթվի ար-
տադրության տեխնոլոգիայի հիմնական կա-
տարելագործման համար:

ԱՇՈՅ ԿԱՐԱՊԵՏԻ ԲԱՎԱՑԱՆԻՒ (ուրիշ
ինն ընկերների հետ) № 10 գիտահետազո-
տական ինստիտուտի ինժեներ.— ռադիոլո-
կացիկոն կայաններ ստեղծելու համար

Երրորդ կարգի մրցանակ է շնորհված՝ 50
հազար ռուբլու չափով

ԴԱՎԻԹ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ
(ուրիշ չորս ընկերների հետ) Մե մետաղուր-
պիայի Կնառողոնական գիտահետազոտական

մասսիվ ապարանջանների ձևով:

Այս բոլոր հայտնագործումները նոր լուս
են սփռում ուրարտական կովառության զա-
սազան կողմերի վրա և հաստատում են սեր-
սախորդ այն եզրակացությունները, որ Ու-
րարտուն մեծ նշանակություն է ունեցել
Անդրկովկասի ժողովուրդների կազմավոր-
ման պրոցեսում:

Կարմիր բլուրի պեղումները շարունակվում
են: Նրանք, անտարակույս, արժեքավոր շատ
տվյալներ կտան հնագույն Անդրկովկասի:
պատմական հարցերի հետագա մշակման
համար, մասնավորապես Ուրարտուի և
Անդրկովկասի ցեղերի փոխհարաբերություն-
ները որոշելու, Առաջավոր Ասիայի պատ-
մության մեջ սկյութացիների գերը պարզե-
լու, ինչպես նաև Անդրկովկասի հին ժողո-
վուրդների կուլտուրայում Հին Արևելքի
պետությունների ժառանգությունը ուսում-
նասիրելու համար: (229)

ՆՈՐ ԼԱՌԵՐԵԱՏՆԵՐ

ինստիտուտի դիրքեկտորի տեղակալ.—Հաս-
տովկ մագնիսական համաձայնվածքների ար-
տադրության տեխնոլոգիայի մշակման ու
կիրառման համար

ՎԱԼԵՆՏԻՆ ԲՈԳԻԴԱՍԻ ԿՈՒՌԵՑԱՆՑԻՒ (մեկ
որի Եղնակերող հետ) № 10 գիտա-հետազո-
տական ինստիտուտի ինժեներ.— Նավա-
վարման ապարատուրա ստեղծելու համար:
Արվեստի գծով.

Առաջին աստիճանի մրցանակ է շնորհված
100 հազար ութրու չափով
ԴԻՄԻՇԻ ԱՐԿԱՆԻԻ ՆԱԽԱՆԴՅԱՆԻՆ
— ի. Վ. Ստալինի պորտրետի համար:
Երկրորդ աստիճանի մրցանակ է շնորհ-
ված 50 հազար ութրու չափով

ՀԱՅՈ ժողովրդական արտիստներ՝ ԱՐ-
ՄԵՆ ԿԱՐԱՊԵՏԻ ԳՈՒԱԿԱԿԱՆԻՆ, ՄԻՔԱՅԵԼ
ԱՐՏԵՄԻ ԹԱՎՐԻԶՅԱՆԻՆ, ՇԱՐՈՒ ՄԿՐՏՉԻ
ՏԱԼՅԱՆԻՆ— Երևանի Ա. Սպիտակիարովի
անվան շքանշանակիր օպերայի ու բալետի
պետական թատրոնում «Արշակ Երկրորդ»
օպերայի ներկայացման համար։
Գրականության գծով.

Առաջին աստիճանի մրցանակ է շնորհված
100 հազար ռուբլու չափով
Ավետիք ՍԱՀԱԿԻ ԽՍԱՀԱԿՅԱՆԻՆ.— «Իմ
Հայրենիք», «Մեծ ՍՏԱԼԻՆԻՆ», «Մարտա-
կոչ», «Իմ սիրուն այնտեղ է...», «Մեր պայ-
քարը», «Ս. Գ. Զաքյանի անմահ հիշատա-
կին» բանաստեղծությունների համար:

ԱՎԵԼԻ ՔԱՆ 60.000 ԲԱԶՄԱԶԱՎԱԿԱԿ ՄԱՅՐԵՐ

Բազմազավակ մայրերի մասին ՍՍՌՄ Գերագույն Սովետի նախագահության 1944 թվի հունիսի 8-ի հրամանագրի կատարման նախնական հանրագումարից պարզվում է, որ Հայկական ՍՍՌ քաղաքներում և գյուղերում գրանցված են 60.000-ից ավելի բազմազավակ մայրեր, որոնք աճեցրել ու դաստիարակել են մինչև 300.000 երեխաներ, որ կազմում է ուսապուրիկայի ազգաբնակչության մոտ մեկ քառորդ մասը։ Մինչ այժմ բազմազավակ մայրերին պետական նպաստ

է տրված 165 միլիոն ռուբլի։ 30.000 բազմազավակ մայրեր պարզեատրված են «Հերոսուհի մայր», «Մայրական փառք» և «Մայրության մեդալ» շքանշաններով։

Ի թիվս այլոց «Հերոսուհի մայր» պատվավոր կոչում է շնորհված Սևանի շրջանի 110-ամյա կոլխոզնիկուհի Խաչատրյան Խանզադային, որն ունի 10 տղա ու աղջիկ և 94 թոռ ու թունորդի։

